

ման կամ անելի շուտ հիմնարկէքի թը-
ւականն, կը գրէ Մինասեան, ընդուն-
ուած է համարել հայերի զաղթի հէնց
առաջին տարին (1606 թ.)» (էջ 39):
Վանքը կը գտնուի Նոր Զուղայի «Մեծ
Մէյդան» կոչուած թաղի մէջ: «Վանքի
ընդհանուր տարածութիւնը 8731 քառ-
մեդր է, որի 3857 մեդրը շինութիւն է»
(էջ 40): Եկեղեցին, որ արձանագրու-
թեան մը համաձայն, շինուած է 1855ին,
ունի եռաթաղի զանգակատուն մը, կա-
ռուցուած 1702 թուականին: Իսկ վանա-
հայր Խաչատուր վրդ. Կեսարացիի կող-
մէ հիմնուած տպարանը (1636-1637),
նորոգութեան ենթարկուած է այժմ եւ
կը շարունակէ ընթանալ իր ժողովուրդի
քայլերուն հետ զուգահեռ:

Վանքը ունի նաեւ իր սեփական Մա-
տենադարանն ու Թանգարանը. այս վեր-
ջինիս մէջ՝ «գտնուած են նաեւ գրչադիր
գիրքեր, թուով 716 հատոր... Ձեռա-
գրերի մէջ կան թանկարժէք գրքեր ու
մագաղաթեայ հագուազիւն գրչադիր,
ոսկեգօծ ու փունջազէղ նրբարուեստ պատ-
կերներով, զարդերով, մանրանկարնե-
րով ու զարդազերերով, որոնք կազմում
են հայ ժողովրդի մշակոյթի թանկագին
դանձերի մի մասը» (էջ 69-70): Թան-
գարանը, կը շարունակէ հաղորդել հե-
ղինակը, ինչպէս նաեւ ամբողջ վանքը՝
իր բոլոր հաստատութիւններով, կը
գտնուի Իրանա-Հնդկաստանի Հայոց Թե-
մական Խորհուրդի իրաւասութեան ներ-
քեւ, մնալով արտասահմանեան հայկա-
կան բազմութիւններու կարեւոր կեդրոննե-
րէն մէկը:

Էջ 76ով, Պր. Մինասեան կը ներկա-
յացնէ լուսանկարներու ճոխ բաժին մըն
ալ, որ կրնայ գոհացնել իր տպագրու-
թեամբ: Օգտագործուած աղբիւրներու
համառոտ ցանկով՝ կը փակուի այս սի-
րուն հատորը:

Թող ներուի մեզի ըսել, որ հեղինա-
կը բաւականացած է պարզապէս նկարա-
դրականով, արտագրելով միաժամանակ
կարեւոր բոլոր արձանագրութիւնները,
նկարագրած է վանքերը, առանց քննա-
կան նպատակներու եւ վիճելի հարցեր
յուզելու: Ձեռն ուսումնասիրուած հիմ-

նարկութեան պարագաները, վանքերու
մշակութային եւ ազգագրական գործունեու-
թիւնը: Օգտագործած աղբիւրներն ալ
արդէն չեն գոհացնէր ամբողջապէս՝
քննական աշխատանք մը անկալող աչ-
քեր: Այս բոլորին խորապէս դիտակից է
նաեւ ժրջան հեղինակը. եւ եթէ չէ
կրցած կատարել պահանջուած քննական
աշխատանքը, որ ներկայիս անհրա-
ժեշտ կը նկատուի պատմական յուշար-
ձաններու համար, պարզապէս անոր հա-
մար է որ ներկայ իր պայմանները զայն
չեն թոյլատրած: Ամէն պարագայի, հա-
տորը կը պահէ իր արժէքը, որովհե-
տեւ ականատեսի մը գրիչին արդիւնք է՝
պատմական համառոտ ակնարկներով.
այս պատճառով օգտաշատ եւ մեծա-
պէս գնահատելի աշխատանք մըն է կա-
տարուածը Պր. Մինասեանի կողմէ: Կը
չնորհաւորենք պատուական հեղինակը եւ
հրատարակութեան ազնիւ բարեբարու-
հին, որ նիւթապէս օժանդակեր է հա-
տորին պատուաբեր հրատարակութեան:

Հ. ՏԱՃԱՏ ՆԱՐՏԱՐԱՆ

DIE BAUKUNST ARMENIENS

Text von KAROLY GOMBOS

Fotos: KAROLY GINK

Լաքակազմ, փոքր քառաձախ, 66 էջ քը-
նագրով եւ 147 ընտիր լուսանկարներով:

Տպ. Պուտափեշտ, 1972:

Մշակչի, մեծ խնամքով կատար-
ուած հրատարակութիւն մը, ահա՛, շատ
ընտիր լուսանկարներով զարդարուած:

Գրախօսական մը չէ առիկա, քանի որ
գերմաներէն չեմ գիտեր, եւ բնագիրը
գրուած է այդ լեզուով: Ուրեմն, հոս
պիտի ներկայացնեմ հատորը, նա մանա-
ւանդ անոր ազնիւ եւ հայ մշակոյթին
նուիրեալ գիտնական հեղինակը՝ Կարօլ
Կոմբոսը եւ իր աշխատակից շնորհալի
տիկինը:

Վերոյիշեալ աշխատութեան 66 էջնոց
բնագիրը պատրաստած է Քարոլի Կոմ-

պոչ, իսկ ընտիր լուսանկարչութիւնը
կատարած է քաջ փորձառու լուսանկա-
րիչ Քարոլի Կինը:

Հրատարակութեան տպագրութեան
մաքրութիւնը, ընտիր թուղթը, լուսա-
նկարներու արտատպութեան պայծառու-
թիւնը, բոլորը կը միանան այս գեղեցիկ
հրատարակութիւնը կատարելապէս ներ-
կայանալի ընելէ զատ՝ մեծապէս ցանկա-
լի դարձնելու:

Նախ բնագիրն մէջ կը գտնենք ընտիր
կերպով արտատպուած 16 գունաւոր նը-
կարներ՝ ուրարտական որմանկարի մը,
Աշտարակի Կարմրաւոր եկեղեցիին, Սե-
ւանի Առաքելոց եւ Հաղարծինի վանքե-
րուն, հայկական գորգի մը, Երեւանի
Թիւ 4823էն մանրանկարի մը, Զուարթ-
նոցի քանի մը քանդակներուն, Երեւանի
Թիւ 3722էն մանրանկարի մը, ինչպէս
նաեւ մանրանկարներու Երեւանի Թիւ
7482էն, 197էն, 9422էն, 4867էն, դար-
ձեալ 7482էն, 197էն եւ 3722էն: Մա-
նրանկարները մասնակի առնուած են:
Եւ կարելի է առարկել որ մեր մանրա-
նկարչութիւնը իր լաւագոյնով չէ որ
ներկայացուած է: Բնագիրը զարդաբ-
ուած է նաեւ ճարտարապետական բազ-
մաթիւ սեւագիծ յատակազծերով:

Լուսանկարներու մասը կը սկսի ըն-
տիր նկարներով, առնուած Երեւանիէն
(Երեւանէն): Ասոնց կը յաջորդէ Գառ-
նիէն առնուած շարք մը: Էջմիածինը կը
սկսի ներկայացուել Թիւ 31 լուսանկա-
րով, ուր կը տրուին զմայլելի մանրա-
մասնութիւններ՝ վանքին բակը ցուցա-
դրուած մեծարժէք խաչքարերուն: Փար-
պին միայն երկու լուսանկարով ցոյց
տրուած է, իր սրտաճմրկ աւերակ վի-
ճակով: Աշտարակ կը ներկայացուի իր
Մողինով, նա մանաւանդ գոհարանման
զմայլելի Կարմրաւորով եւ Քասաղի հը-
նադարեան կամուրջով: Յաջորդ լուսա-
նկարներուն շարքը խօսուն կերպով ցոյց
կու տայ աւերակներու թագուհին՝ Զը-
ւարթնոցը: Սեւանայ լիճին հետ կը ներ-
կայացուի անոր գրաւիչ կղզին, գեղեց-
կադիր վանքովը: Բազմաթիւ ընտիր լու-
սանկարներ կը ներկայացնեն դժուարա-
մատչելի Հաղարծինը, իր մեկենասնե-

րուն գրաւիչ բարձրաքանդակներով: Գո-
չավանքի լուսանկարները կը սկսին ան-
նման խաչքարին ժանեկատիպ նրբաբ-
ուեստ պատկերացումով, որուն կը յա-
ջորդէ անհաւատալի Գեղարդը: Նկարնե-
րու բաժինը կը փակուի հին ու նոր ար-
ուեստի քանի մը գործերու մանրամաս-
նութիւններով: Վերջապէս, Քոչարի
սանձարձակ Սասունցի Դաւիթը, սպառ-
նալից ու սուսերամերկ, կարծես մար-
տի կ'արշաւէ՝ պահելու պահպանելու
մեր պայնական ժառանգութեան այս
անփոխարինելի դանձերը:

Այսպէս ակամայ կը փակենք այս գե-
ղեցիկ հատորը:

Այժմ խօսինք անոր հեղինակին մա-
սին:

Անցեալ տարի Մայիսի մէջ կը ստա-
նայի նամակ մը Պուտափեշտէն ինձի
ուղղուած եւ անգլիերէն գրուած, օտո-
րագրուած Տնօրէն Քարոլի Կոմպոչէն:
Նամակը կ'իմացնէր թէ հունգարական
թանգարաններուն հունգար պատմագէտ-
ները ծանօթ չէին եւ չէին ուսումնա-
սիրած հայկական ճարտարապետութիւ-
նը եւ գեղարուեստը, քանի որ գոյու-
թիւն չունէին հունգարերէն հրատարա-
կութիւններ այդ նիւթերուն նուիրուած,
հետեւաբար՝ հայկական արժէքաւոր ար-
ուեստը անառօթ մնացած էր հունգար
ժողովուրդին: Յարգելի Տնօրէնը կ'ա-
ւելցնէր որ «Առիկա ինձի վրդովում
պատճառեց եւ քանի մը տարի է որ ես
ուսումնասիրել սկսայ հայ արուեստը:
Հայաստան գացի տեսնելու եւ ուսում-
նասիրելու հայ արուեստի գործերը՝
թանգարաններուն մէջ: Անցեալ տարի
հրատարակեցի իմ առաջին գիրքս, հուն-
գարերէն լեզուով, հայ արուեստի մա-
սին: Հատորը որ կը պարունակէ 16 գու-
նաւոր եւ 146 սեւ-ճերմակ լուսանկարներ,
հրատարակուեցաւ նաեւ գերմաներէն:
Այս գործս յարգանքի տուրք մըն է տա-
ռապած հայ ժողովուրդին, եւ կը յու-
սամ որ քանի մը տարիէն անելի մեծ
գիրք մը գրեմ»:

Տնօրէն Կոմպոչ, որ վարիչն է Պու-
տափեշտի «Ֆերենց Հորը» Արեւելեան Ա-
սիոյ Արուեստից Թանգարանին, ինչպէս

նաեւ փոխ-տնօրէնը Պոլտափեշտի մանր արուեստից ճոխ թանգարանին, ինծմէ կը խնդրէր Վիլչապը հայկական գորգերու մէջ՝ 1931ին հրատարակած մենագրութեանս առանձնատիպը:

Կարճ ժամանակ վերջ, պատահեցաւ որ գործով՝ երեք օրուան համար Պոլտափեշտ ստիպուիմ երթալ: Դժբախտաբար, հակառակ կամքիս, կարելի չեղաւ Տնօրէն Կոմպոլը տեսնել: Սակայն, երբ 1973ի Հոկտեմբեր 14ին դարձեալ առիթը ներկայացաւ Պոլտափեշտ այցելելու, այս անգամ յաջողեցայ ժամադրուիլ մեծայարգ Տնօրէնին հետ, եւ յաջորդ օրը՝ պանդուկիս հիւրանոցին մէջ ուրախութիւնը ունեցայ ծանօթանալու իրեն եւ իր շնորհալի տիկնոջ: Տէր եւ Տիկին Կոմպոլ, երկուքն ալ երիտասարդ, երկուքն ալ գեղեցիկադէմ, գրաւիչ անձեր էին: Տիկին Կոմպոլ պիտի ըլլար մեր թարգմանը՝ իր նորուա անգլիերէնով: Շուտով մեզի ծանօթ բոլոր լեզուները գործածելով, նոյնիսկ Տնօրէն Կոմպոլի քանի մը հայերէն գրաբար մատուցեցին, կրցանք շատ լաւ հասկցուիլ: Սքանչելի էր իրենց խանդավառութիւնը՝ հայ արուեստի մասին. իրենց անհատական միջոցներով՝ հայագիտական արուեստի հրատարակութեանց խոշոր մատենադարան մը կազմած էին. հատորներ՝ որոնցմէ մեծ կարիք ունէր իր աշխատութիւններուն համար օգտուելու: Ինք եւ զած էր շարժիչը այն հետաքրքրութեան՝ որ ծայր տուած էր Պոլտափեշտի թանգարանային, արուեստի եւ գիտութեան շրջանակներուն մէջ: Խանդավառօրէն կը պատմէր Երեւանին իր հանդիպումներուն մասին: Հայաստան գրեթէ ամէն հնավայր այցելել էր: Ինծի մեծ հաճոյք կը պատճառէր իր զարմանալիօրէն մաքուր եւ օտար ազդեցութիւններէ անխառն տեսնելու տեսնելու թանգարանային, արուեստի եւ գիտութեան շրջանակներուն մէջ: Խանդավառօրէն կը պատմէր Երեւանին իր հանդիպումներուն մասին: Պոլտափեշտի թանգարանը Պոլտափեշտի արուեստից թանգարանը. հոն ներկայացուցայ զանազան մասնագէտ վարիչներու: Տեսայ ա-

մէջընտիր նմոյշներ հայկական գծարուեստով գորգերու (երեք կարեւոր հայկական վիլչապ գորգեր Հունգարիոյ մէկ ուրիշ քաղաքը դրկուած էին՝ ցուցադրութեան): Բազմաթիւ ընտիր գորգեր եւ հիւսուածեղէններ տեսայ, մեծ մասամբ հայկական, որոնց լուսանկարները խոստացան ուղարկել Վորդը Հայոց մօտ՝ գործին երկրորդ հատորին համար, զոր վերախմբագրելու վրայ եմ այժմ:

Մեր խանդավառ տեսակցութիւնը մեզ դարձեալ իրարու մօտ բերաւ, եւ երկար ժամեր խօսեցանք կատարուած եւ կատարուելիք գործերու, աշխատութեանց մասին: Պատուարժան Տնօրէնը հարուստ էր ծանօթութիւններով: Գորգերու մասին նոր աշխատութիւն կը ծրագրէր, թէ՛ հունգարերէն եւ թէ՛ անգլիերէն: Խոստացայ օգտակար ըլլալ իրեն: Եւ արդարեւ Վենետիկ Ս. Ղազար հասնելուս, աղքատուէր Միարանութիւնը անմիջապէս հաճեցաւ Վորդը Հայոց մօտ՝ իմ գործին մէկ օրինակը եւ Հ. Հացուհիի մեծարժէք Վատմութիւն հայ տարադիր՝ գրեթէ օրինակ մը ազնուութեամբ ուղարկել Տնօրէն Կոմպոլի:

Տնօրէն Կոմպոլ մտադիր է հայ արուեստի ցուցահանդէս սարքելու Պոլտափեշտի արուեստից թանգարանին մէջ: Երազբաժ է հայ արուեստի նուիրեալ հրատարակութիւններ, դասախօսութիւններ: Հունգարիոյ մէջ հունգար ժողովուրդին Հայը իր իսկական մեծութեամբ ներկայացնելու այս կամաւոր, անվարձ, անկեղծ նուիրումը Տնօրէն Կոմպոլի նման արժէքաւոր գիտնականէ մը, մեզ խորոց օրտէք բախտապարտ թողնելու է: Ատկէ աւելի, պէտք է որ գիտակցութիւնն ունենանք իր գործը հեշտացնելու համար՝ ամէն դիւրութիւն հայթայթելու: Ինք շատ ուրախ եւ երախտապարտ էր որ Հայաստանի մէջ մեծ օժանդակութիւն գտեր էր, որ ստացեր էր բազմաթիւ հրատարակութիւններ: Թանգարան եւ Մատենադարան մատչելի եղեր են իրեն, եւ ամէն տեսակ ծանօթութիւններ հաղորդած են ազնուօրէն: Ս. Ղազար հանդիպելուս՝ ըսուեցաւ ինծի որ ստացեր էին Տնօրէն Կոմպոլի գեր-

մաներէն հատորը, եւ կը ջանային իր խնդրանքները գոհացնել: Մեծ է ցանկութիւնս դարձեալ Պոլտափեշտ հանդիպելու, Կոմպոլները տեսնելու, եւ իրենց հետ գործակցելու՝ հայ արուեստի իրենց ցանկացած ցուցադրութեանց:

Թ. ԳԻՒՐԵՅԱՆ

* * *

ՄԱՅՐ 8ՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԱՆՑ

Կազմեց

ՆՈՐԱՅՐ ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ

Հատոր Զ. Բառաձայ, Ոկարագրադ:
Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց,
1972, էջ 626:

Նորայր Սրբազան անխոնջ կերպով կը շարունակէ Սաղէմի Սբ. Յակոբի վանքին հայերէն ձեռագիրներու կարեւոր ցուցակները կազմել ու հրատարակել: Այսպէս կ'ունենանք վեցերորդ հատորը, որ կը պարունակէ 1701էն 2000 թիւ ձեռագիրները: Ինչպէս նախորդ, նոյնպէս եւ այս վեցերորդ հատորը կը հրատարակուի ծախքով Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական Բաժնին, հայերէն գիրքերու մատենաշարին մէջ, որուն համար շնորհապարտ ենք:

Բացի բուն ցուցակէն, որ էջ 1-ով կը սկսի, ներածական մը կայ՝ ԺՁ էջ, ուր տեղ գտած է «Շնորհակալիք» մը հրատարակութեան: Յետոյ կու գայ բացատրական մը, ցուցակագիրէն, առաջիկայ ցուցակին մասին: Այս ցուցակին մէջ ներկայացուած են 54 Աւետարաններ (մին հայերէն եւ տաճկերէն): Մեծարժէք են Աստուածաշունչերու շարքը, թիւով ութը հատ: Ներկայացուած ձեռագիրները, որոնցմէ 148 հատը ԺԸ. եւ ԺԹ. դարէն են, թէ՛ պարունակութեամբ եւ թէ՛ մանրակարգութեամբ արժէքաւոր կը թուին:

Անմեկնելի է կարգ մը ձեռագիրներու նկարագրութեան սկիզբը դրուած «Տեղի»

եւ ուրիշներու ալ «Թուական» յայտարարութիւնը, կամ ալ միասնաբար թէ՛ «Տեղի» եւ թէ՛ «Թուական», որոնց ո'չ ո'ւր գրուած ըլլալը եւ ո'չ ալ ե'րբ գրուած ըլլալը նշանակուած է, անծանօթ ըլլալուն համար: Կան թուականներ որ միայն հայերէն գլխադրով տրուած են, մինչ ուրիշներ թիւով ալ նշանակուած են:

Թիւ 1799 Աւետարանին մանրակարգիչ նշանակուած է Միմաւ. սակայն տրուած ծանօթութեանց մէջ կը պակսի բացատրութիւն եւ Միմաւի յիշատակութիւն չկայ: Ոչ ալ որեւէ պատճառ ցոյց կը տրուի թիւ 1736 Խաղաղութիւն (1341էն)՝ եկեղեցաց գաւառի Կայիփոսի վանքը (հարցականով) գրչութեան վայր նշանակուելուն:

Պողարեան Սրբ. արժէքաւոր գործ կը կատարէ Սաղէմի այլապէս դժուարամատչելի հայերէն ձեռագրաց հաւաքածոն սուղամասիւրդներուն մատչելի ընելով: Մենք շնորհակալ ենք իր կատարած գործին համար: Կը սպասենք յաջորդ հատորներուն:

Թ. ԳԻՒՐԵՅԱՆ

* * *

8ՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՁՄՄԱՌԻ ՎԱՆՔԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Կազմեցին

Հ. ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆ ԵՒ
Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ՈՍԿԵԱՆ

Վիեննա, Միխայիլով տպ. 1971; Բառաձայ, էջ 324:

Այս ցուցակին տպագրութիւնն ալ, ինչպէս ասկէ առաջուան բազմաթիւ ցուցակներուն, կը պարտինք Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան. եւ ասոր համար ջերմօրէն շնորհակալ ենք:

Հատորին սկիզբը՝ էջ մը «Ներկու խօսքով, պատմութիւնը կը տրուի այս ցուցակին կազմութեան, ուր ի մէջ այլոց կ'ըսուի որ «Ցուցակիս» մէջ չեն մըտած Անտոնեան Հաւաքածոյի ձեռագիր-

ներէն 37 ձեռագիր: Ասոնցմէ ոմանք՝ կ'երեւի Ձմառ չեն հասած. ուրիշներ՝ ա՛յս կամ ա՛յն պատճառով անմատչելի եղած են երկու ցուցակագրող Հայրերուն: Այս դուրս մնացած ձեռագիրներու ցանկը տրուած է Յաւելուածին մէջ, այնպէս՝ ինչպէս նշանակած են ցուցակագրող Հայրերը: Զեմ գիտեր ինչո՞ւ այս խորհրդաւոր անորոշութիւնը, երբ այլեւս լաւ ծանօթ է որ Ձմառի հաւաքածոյն բաւական թիւով ձեռագիրներ՝ վանական իշխանութեան կողմէ ծախու հանուած են ժամանակին:

Առանց հաշուելու Յաւելուածին 37 անհետացած գրչագիրները, այս ցուցակին մէջ ներկայացուած են 259 ձեռագիրներ, որոնցմէ հնազոյն է 1117էն (Գրիգոր Աստուածաբանի ճառք) Սամշուղէ գրուած, թղթեայ: Իսկ նորագոյնը 1888էն: Ձեռագիրներուն 50ը թ. դարէն են, իսկ 88 հատն ալ թ. դարէն: Կարեւոր ձեռագիր մըն է Յուսէպիս թիւ 431ը, «Գիրք թղթոց» մը, 1298-9ին գրուած, Կիլիկիա:

Հաւաքմանս մէջ, զարմանալիօրէն սակաւաթիւ են Աւետարանները, հազիւ հինգ հատ, եւ բոլորն ալ զուրկ նշանակելի կարեւորութենէ: Կան բազմաթիւ Շարականներ ու Մաշտոցներ: Կարեւորներն են Ժողովածունները:

Հատորը կ'աւարտի ձեռագիրներու ժամանակագրական ցանկով, ինչպէս նաեւ յատուկ անուններու այլ ցանկերով: Զարմանալիօրէն՝ Անտոնեաններու ձեռագրական հաւաքածոն աղքատ է որակով: Նոյնիսկ պակասող 37 ձեռագիրներն ալ միասին նկատած, բացի 986 թուականի Աւետարանէն, ակնառու բան մը չկայ հոն: Եւ սակայն կ'ակնկալուէր որ իրենց նման պատկառելի Միաբանութիւն մը, 1700էն առդին, յաջողած ըլլար ձեռք բերել աւելի արժէքաւոր ձեռագիրներ: Ասով հանդերձ՝ ըսել չենք ուզեր թէ Անտոնեանց հաւաքածոն զուրկ է կարեւորութենէ: Մենք սրտանց երախտապարտ ենք որ Անտոնեան Հայրերը գոնէ այսքանը կրցեր են փրկել եւ մեր օրերուն հասցնել:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԱՐԲԱԶԱՄ ԿՐԵՏԱՑԻ. — Պատմութիւն: Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1973, էջ 311:

ԱՐԲԱԶԱՄԵԱՆ ԱՇՈՏ ԳԱՐԵԳՆԻ. — Հայոց գիր եւ գրչութիւն: Երեւան, Պետ. Համալսարանի հրատ. 1973, էջ 371:

ԱՐԱՅԵԱՆ Ռ. Ս. (Խմբ.). — Հազար ու մի խաղ: Երեւան, ՀԿԿ Կոմիտէի հրատ. 1969, էջ 134:

ԱՂԱՅԵԱՆ ՂԱԶԱՐՈՍ. — Երկերի ժողովածու (հատոր Բ.): Երեւան, «Հայաստան» հրատ. 1973, էջ 354:

ԱՂԱՅԵԱՆ ՂԱԶԱՐՈՍ. — Անահիտ: Երեւան, «Հայաստան» հրատ. 1973, էջ 50:

ԱՄԻՐԲԵԿԵԱՆ ՄԻՔԱՅԷԼ ԱՐՇԱԿԻ. — Վերջին հողակտորի վրայ: Երեւան, «Հայաստան» հրատ. 1973, էջ 403:

ԱՐԵՒՇԱՏԵԱՆ Ս. Ս. — Փիլիսոփայական գիտութեան ձեւաւորումը հին Հայաստանում, Ե-Ձ դդ. (ռուսերէն): Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1973, էջ 350:

ԱՒԱԳԵԱՆ ԳՈՒՐԳԷՆ ԴԱԹԻ. — Հայաստանի անհետացած եւ անհետացող կենդանիները: Երեւան, «Հայաստան» հրատ. 1971, էջ 47:

ԲՈՌՆԱԶԵԱՆ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԵՎԱՌԻ. — Սոցիալ-տնտեսական յարաբերութիւնները Կիլիկեան Հայկական Պետութիւնում, ԺԲ-ԺԴ դարերում: Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1973, էջ 319:

ԲՐԵԺՆԵՒԻ Լ. Ի. — Կուսակցական շինութեան ակտուալ պրոբլեմների մասին: Երեւան, «Հայաստան» հրատ. 1973, էջ 611:

ԲՐԵԺՆԵՒԻ Լ. Ի. — Յանուն արդարացի դեմոկրատական խաղաղութեան, յանուն ժողովուրդների անվտանգութեան եւ միջազգային համագործակցութեան: Երեւան, «Հայաստան» հրատ. 1973, էջ 48:

ԳԷՈՐԳԵԱՆ ԱՄՏՂԻԿ ԲԱԳՐԱՏԻ. — Արհեստներն ու կենցաղը հայկական մա-

նրանկարներում: Երեւան, «Հայաստան» հրատ. 1973, էջ 28, եւ 48 տախտակներ:

ԳԻՒՂԲՈՒՂԱՆ Ս. Վ. — Հայերէնի ուղղագրութեան պատմութիւն: Երեւան, Պետ. Համալսարանի հրատ. 1973, էջ 432:

ԳՈՐԾԱԿԱԼԵԱՆ ՀԱՅԿ ՆԻԿՈՂՈՍԻ. — Հայկական տառատեսակներ: Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1973, էջ 107:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ. — Գրականութեան մասին (հրատարակութիւն Մինաս Հիւսեանի): Երեւան, «Հայաստան» հրատ. 1973, էջ 203:

ԴԱՆԻԷԼԵԱՆ ԿԱՐԼԷՆ ԱՐՏԱՇԷՍԻ. — Հայ գիւղագրութիւնը թ. դարում: Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1973, էջ 570:

ԴԱԹԵԱՆ ՎԱՀԱԳՆ ԱՐՄԵՆԱԿԻ. — Երկերի ժողովածու. հտ. Ա. (Բանաստեղծութիւններ): Երեւան, «Հայաստան» հրատ. 1973, էջ 440:

ԴԱԹԵԱՆ ՎԱՀԱԳՆ ԱՐՄԵՆԱԿԻ. — «Ո՛ր տայր ինձ գծուի ծխանի»: Երեւան, «Հայաստան» հրատ. 1973, էջ 50:

ԴԱՌՈՅԵԱՆ ՌԱԶՄԻԿ ՆԻԿՈՂՈՍԻ. — Մեղրահաց: Երեւան, «Հայաստան» հրատ. 1973, էջ 198:

ԶԱՔԱՐԵԱՆ ԱԼՄԱՍ ԳՐԻԳՈՐԻ. — Ի. դարի սկիզբի Հայոց բանաստեղծութիւնը: Ակունքները եւ զարգացման ուղիները: Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1973, էջ 328:

ԹԱՀՄԻԶԵԱՆ ՆԻԿՈՂՈՍ ԿԻՐԱԿՈՍԻ. — Ներսէս Շնորհալին՝ երգահան եւ երաժիշտ: Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1973, էջ 247:

ԹՈՎՄԱՍԵԱՆ ՆԵՐՍԷՍ ՌԱՖԱԵԼԻ. — Հայ սոցիալ-տնտեսական միտքը՝ վաղ Միջնադարում: Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1973, էջ 208:

ԻՍԱՀԱԿԵԱՆ ԱԻԵՏԻՔ. — Երկերի ժողովածու, Ա. հատոր: Երեւան, «Հայաստան» հրատ. 1973, էջ 463: